ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երեվանի Պետական Համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետի Խորհրդի
22.06. 2011թ. կայացած թիվ 9.10-11 նիստի
Նիստին ներկա էին Խորհրդի 40 անդամներից 24 –ը:

Հաստատվեց նիստի օրակարգը՝

1. Շնորհավորանքներ՝ բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի դոցենտ Ա.Ա. Կիտբալյանի 75-ամյա հոբելյանի կապակցությամբ
2. Առակա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորում
3. Ընթացիկ հարցեր

Հոբելյանի կապակցությամբ պրն Ա.Ա. Կիտբալյանին շնորհավորեցին ֆակուլտետի դեկան Ռ. Ավագյանը, բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի վարիչ Մ. Գրիգորյանը, ակադեմիկոս Հ. Ներսիսյանը: Ելույթներ ունեցան նաև Է. Չուբարյանը, Ժ. Խաչատրյանը և Դ. Սեդրակյանը: Նրանք ներկայացրեցին Կիտբակյանին որպես ազնվագույն մարդ և դասախոս, որը վայելում է գործընկերների և ուսանողների սերն ու հարգանքը:

Ասպինատների ատեստավորում

Ամբիոնների կողմից ներկայացվեց ասպիրանտական աշխատանքնեի ընթացքը: Ելույթներ ունեցան Ա. Կիրակոսյանը, Վ. Մորազովը, Ռ. Հակոբյանը, Ա.Դանագուլյանը: Քննարվեց ասպիրանտների մանկավարժական պրակտիկայի կրեդիտներիի հարցը: Պրն Լ. Ասլանյանը նորից բարձրացրեց կրեդիտային համակարգը ասպիրանտների նկատմամբ կիրառելու նպատակահարմարության հարցը: Այս հարցում նրան պաշտպանեցին Ա. Կիրակոսյանը և Դ. Սեդարակյանը. նրանք առաջարկեցին հարցը նախապատրաստել և Խորհրդի համապատասխան որոշում կայացնել:

Որոշեցին – հիմք ընդունելով կատարված հետազոտական աշխատանքների ծավալը և ամբիոնների դրական եզրակացությունները՝ ատեստավորել ասպիրանտներին:

Ընթացիկ հարցերում մրցույթային հանձնաժողովի նախագահ, պրոֆ. Ա. Ա. Կիրակոսյանը ներկայացրեց մրցույթային հանձնաժողովի դրական եզրակացությունը պինդ մարմնի ֆիզիկայի ամբիոնի ասիստենտ, ամբիոնի գիտահետազոտական լաբորատորիայի ավագ գիտաշխատող, ֆիզ. մաթ. գիտ. դոկտոր Սամվել Գևորգյանին պրոֆեսորի կոչման և բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի ասիստենտ, ֆիզ. մաթ. գիտ. թեկնածու Արծրուն Սարգսյանին դոցենտի կոչումներ շնորհելու հարցերի վերաբերյալ: Նշեց, որ հավակնորդների գիտամանկավարժական գործունեությունը բավարարում է ՀՀ ԲՈՀ-ի կողմից առաջադրվող պահանջներին:

Որոշեցին – 1) Հիմք ընդունել մրցույթային հանձնաժողովի կարծիքը Ս. Գևորգյանի գիտամանկավարժական գործունեության մասին՝ երաշխավորել ֆիզ.-մաթ. գիտությունների դոկտոր Սամվել Գևորգյանին պրոֆեսորի կոչման ներ-կայացնելու համար:

2) Հիմք ընդունել մրցույթային հանձնաժողովի կարծիքը Ա. Սարգսյանի գիտամանկավարժական գործունեության մասին՝ երաշխավորել ֆիզ.-մաթ. գիտությունների թեկնածու Արծրուն Սարգսյանին դոցենտի կոչման ներկայացնելու համար:

Ֆիզիկայի ֆակուլտետի դեկան Ռ. Մ. Ավագյան

Խորհրդի քարտուղար Ի.Գ. Հարությունյան